ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1242

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՐԱՆՑ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, 0.09136ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Կիրանց գյուղի վարչական սահմաններում, բնակելի կառուցապատման նպատակով առանձնացվել է 0.09136հա մակերեսով հողամաս: Համաձայն Տավուշի մարզի Իջևան համայնքի Կիրանց գյուղը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-2 համակցված պլանավորման փաստաթղթերի, նշված 0.09136 հա մակերեսով հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային, բնակելի գործառնական նշանակության հողամաս /ծածկագիր 11-039-0041-0002/: Անհրաժեշտություն է առաջացել 0.09136 հա մակերեսով հողամասին տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային Օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով, Տավուշի մարզի Իջևան համայնքի Կիրանց գյուղը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-2 համակցված պլանավորման փաստաթղթերի և ՀՀ կառավարության 29.12.2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի Կիրանց գյուղի վարչական սահմաններում՝ /ծածկագիր 11-039-0041-0002/, բնակելի կառուցապատման նպատակով առանձնացնել 0.09136հա մակերեսով մաս, համաձայն հաստատված հատակագծի:

2. Իջևան համայնքի Կիրանց գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.09136 հա հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Կիրանց, 5-րդ փողոց 7-րդ փակուղի թիվ1 հողամաս:

Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, +37460800094 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1243

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ԻՋԵՎԱՆ, ԻՋԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 17/1 ՀԱՍՑԵԻ 0.01538ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔ ԻՋԵՎԱՆ, ԻՋԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.01047ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, քաղաք Իջևան, Իջևանյան փողոց թիվ 17/1 հասցեում գտնվող 0.01538հա մակերեսով հողամասը /ծածկագիր 11-001-0115-0161/ և Իջևան համայնք, քաղաք Իջևան, Իջևանյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող 0.01047հա մակերեսով հողամասերը համարվում են. բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասեր /ծածկագիր 11-001-0115-0160/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել հողամասերի գործառնական նշանակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Տավուշի մարզի Իջևան համայնք, քաղաք Իջևան, Իջևանյան փողոց թիվ 17/1 հասցեում գտնվող 0.01538հա մակերեսով հողամասը /ծածկագիր 11-001-0115-0161/ և Իջևան համայնք, քաղաք Իջևան, Իջևանյան փողոց թիվ 23 հասցեում գտնվող 0.01047հա մակերեսով հողամասը հանել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից և դասել բնակավայրերի նպատակային, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարքին:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1244

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՉԱՋՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.122ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ 11-013-0057-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Ոսկեհատ Եղիազարյանը Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում իրենց պատկանող 0.122հա մակերեսով /ծածկագիր 11-013-0057-0006, վկայական 2604416/ հողամասին հասցեավորում տրամադրելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզի Իջևան համայնքի Աչաջուր բնակավայրի վարչական սահմաններում 0.122հա մակերեսով /ծածկագիր 11-013-0057-0006, վկայական 2604416/ հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Աչաջուր 43-րդ փողոց, 11 հողամաս:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
ԻՋԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվականի N 1245

03.01.2025Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 06 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել համայնքի ղեկավարի 03.01.2025թ. թիվ 06 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքի ղեկավարի 03.01.2025թ. թիվ 06 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՅԳԵՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.225ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ 11-009-0057-0007 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ, ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Անահիտ Հասմիկի Ալավերդյանը՝ ծնված 04.04.1966թ. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ բնակավայրի վարչական սահմաններում ձեռք է բերել հողամաս,որի վրա առկա է 1970թ. կառուցված անասնաշենք և դիմել է հիմքերի վերականգնման խնդրանքով: Անասնաշենքի զբաղեցրած հողամասի մակերեսը, ըստ Այգեհովիտի գյուղապետարանի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից տրված քաղվածքի, կազմում է 0.14հա /ծածկագիր 11-009-0057-0007/: Չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.225հա, ուստի դիմել է մինչև 2001թ. մայիսի 15-ը տնատիրության կողմից տիրապետվող և ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական 0.14հա մակերեսով և սահմանազատված, չկառուցապատված 0.085հա մակերեսով հողամասի և 50,82քմ ներքին մակերեսով անասնաշենքի, քաղաքաշինական փաստաթղթերը չպահպանված, իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Հաշվի առնելով, որ նշված հողամասն ու շինությունները չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 43 հոդվածի 3-րդ կետի, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին'' ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների , ՀՀ ,,Քաղաքացիական օրենսգրքի,, 188-րդ հոդվածի, պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հաստատել՝ Տավուշի մարզի Իջևան համայնքի Այգեհովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով քաղաքացի Անահիտ Հասմիկի Ալավերդյան պատկանող անասնաշենքի օրինական 0.14հա մակերեսով և սահմանազատված, չկառուցապատված 0.085հա մակերեսով և 11-009-0057-0007 ծածկագրով հողամասի սահմանները, ըստ ճշտված սահմաններով հատակագծի:

2.Վերականգնել քաղաքացի Անահիտ Հասմիկի Ալավերդյանին սեփականության իրավունքը՝ Այգեհովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.225հա մակերեսով հողամասի և 50,82քմ ներքին մակերեսով անասնաշենքի

պատմամբ /ծածկագիր 11-009-0057-0007/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

3.Տավուշի մարզի Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով քաղաքացի Անահիտ Հասմիկի Ալավերդյանին պատկանող անասնաշենքի զբաղեցրած 0.225հա մակերեսով և 11-009-0057-0007 ծածկագրով հողամասին և անասնաշենքին տալ հետևյալ հասցեն. Տավուշի մարզ Իջևան համայնք գյուղ Այգեհովիտ 30-րդ փողոց 1-ին փակուղի 2/1 անասնաշենք:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ